Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
մայիսի 26-ի N 729 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2007 թվականի
հոկտեմբերի 4-ի N 1268 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԻ ՎԻԶԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՄՈՒՏՔԻ ՎԻԶԱՅԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԵՏ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա ստանալու կամ Հայաստանի Հանրապետության մուտքի վիզայի ժամկետը երկարաձգելու համար օտարերկրացին մուտքի վիզա տրամադրող մարմին է ներկայացնում՝

1) անձնագիր կամ միջազգայնորեն ճանաչված անձը հաստատող ճամփորդական փաստաթուղթ.

2) Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա ստանալու համար դիմում-հարցաթերթիկ՝ համաձայն N 1 ձևի, որտեղ անգլերենով կամ հայերենով լրացվում են՝

ա. ազգանունը, անունը (ինչպես անձնագրում),

բ. այլ անուններ,

գ. ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը,

դ. ծննդյան վայրը,

ե. սեռը,

զ. զբաղմունքը,

է. անձնագրի համարը, տրամադրման և վավերականության ժամկետները,

ը. անձնագրի տեսակը,

թ. քաղաքացիությունը,

ժ. մշտական բնակության հասցեն, հեռախոսահամարը,

ժա. Հայաստանում գտնվելու ընթացքում բնակության հասցեն,

ժբ. հանցագործության համար դատապարտված լինելու մասին նշում,

ժգ. դիմողի անձնագրում նշված և նրա հետ ճանապարհորդող՝ 16 տարեկանից ցածր տարիքի երեխաների անունները, ազգանունները, ծննդյան օրերը, ամիսները, տարեթվերը, քաղաքացիությունները,

ժդ. հրավիրող կազմակերպության անվանումը (կամ հրավիրող անձի անունը, ազգանունը), հասցեն և հեռախոսահամարը,

ժե. այցելության նպատակը,

ժզ. մուտքերի քանակը,

ժէ. Հայաստանում կեցության տևողությունը,

ժը. Հայաստան մուտք գործելու օրը, ամիսը, տարեթիվը,

ժթ. Հայաստանից ելքի օրը, ամիսը, տարեթիվը,

ի. դիմում-հարցաթերթիկի լրացման ամսաթիվը,

իա. դիմողի ստորագրությունը.

3) Հայաստանի Հանրապետության մուտքի վիզայի ժամկետի երկարաձգման համար դիմում-հարցաթերթիկ՝ համաձայն N 2 ձևի, որտեղ անգլերենով կամ հայերենով լրացվում են՝

ա. ազգանունը, անունը (ինչպես անձնագրում),

բ. այլ անուններ,

գ. ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը,

դ. ծննդյան վայրը,

ե. սեռը,

զ. զբաղմունքը,

է. անձնագրի համարը, տրամադրման և վավերականության ժամկետները,

ը. անձնագրի տեսակը,

թ. քաղաքացիությունը,

ժ. Հայաստանում գտնվելու ընթացքում բնակության հասցեն, հեռախոսահամարը,

ժա. դիմողի անձնագրում նշված և նրա հետ ճանապարհորդող՝ 16 տարեկանից ցածր տարիքի երեխաների անունները, ազգանունները, ծննդյան օրերը, ամիսները, տարեթվերը, քաղաքացիությունները,

ժբ. վիզայի երկարաձգման նպատակը,

ժգ. վիզայի երկարաձման ժամկետը,

ժդ. Հայաստանից ելքի օրը, ամիսը, տարեթիվը,

ժե. դիմում-հարցաթերթիկի լրացման ամսաթիվը,

ժզ. դիմողի ստորագրությունը:

Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա ստանալու, մուտքի վիզայի ժամկետը երկարաձգելու, ինչպես նաև էլեկտրոնային մուտքի վիզա ստանալու համար դիմում-հարցաթերթիկները պարունակում են նաև հայտարարություն (հայերենով և անգլերենով)՝ դիմում-հարցաթերթիկում նշված տեղեկատվության ճիշտ լինելու մասին:

Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա ստանալու համար լրացվող դիմում-հարցաթերթիկի ներքևի հատվածում մուտքի վիզան տրամադրած մարմնի պաշտոնատար անձի կողմից նշվում են վիզայի համարը, տեսակը, կոդը, վիզան տալու ամսաթիվը և վիզայի վավերականության ժամկետը, վիզայի տրամադրման համար վճարված պետական տուրքի չափը և Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա տրամադրող պաշտոնատար անձի ստորագրությունը, իսկ Հայաստանի Հանրապետության մուտքի վիզայի ժամկետի երկարաձգման համար լրացվող դիմում-հարցաթերթիկի ներքևի հատվածում Հայաստանի

Հանրապետության մուտքի վիզայի ժամկետը երկարաձգելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձի կողմից նշվում են վիզայի համարը, տեսակը, կոդը, վիզայի երկարաձգման ամսաթիվը և վիզայի վավերականության ժամկետը, վիզայի երկարաձգման համար վճարված պետական տուրքի չափը և Հայաստանի Հանրապետության մուտքի վիզայի ժամկետը երկարաձգող պաշտոնատար անձի ստորագրությունը.

4) դիմում-հարցաթերթիկին փակցնելու համար Հայաստանի Հանրապետության տարածքում, օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից տրվող մուտքի վիզաների դեպքում՝ 35 x 45 մմ չափսի գունավոր լուսանկար, իսկ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում դիմում-հարցաթերթիկին կցվում է օտարերկրացու անձնագրի պատճենը.

5) հրավերի հիման վրա Հայաստանի Հանրապետություն այցելելու դեպքում՝ նաև հրավերը հավաստող համապատասխան փաստաթուղթ, իսկ տարանցիկ մուտքի վիզա ստացող օտարերկրացին՝ դեպի երրորդ երկիր ուղետոմսեր կամ երրորդ երկրի մուտքի վիզա.

6) մինչև 18 տարեկան օտարերկրացին՝ նաև ծնողների կամ ծնողներից որևէ մեկի, օրինական ներկայացուցչի, ուղեկցողի հետ միասին այցելելու կամ միայնակ, Հայաստանի Հանրապետությունում գտնվող ծնողների կամ ծնողներից որևէ մեկի, այլ օրինական ներկայացուցչի մոտ կամ ընդունող կազմակերպություն այցելությունը հավաստող փաստաթուղթ (ծնողների, ծնողներից որևէ մեկի կամ օրինական ներկայացուցչի կողմից ներկայացված դիմում կամ ընդունող կազմակերպության կողմից ներկայացված միջնորդագիր).

7) խմբակային մուտքի վիզա ստանալու համար՝ խմբի անդամների ցուցակը, որտեղ պետք է նշված լինեն խմբի անդամների անունները, ազգանունները, առկայության դեպքում՝ հայրանունները, ծննդյան օրերը, ամիսները, տարեթվերը, քաղաքացիությունները,

Հայաստանի Հանրապետությունում համատեղ գործունեություն իրականացնելու մասին հիմնավորող փաստաթուղթը.

8) պաշտոնական կամ դիվանագիտական մուտքի վիզաների համար՝ համապատասխան պաշտոնական հայտագիր.

9) պետական տուրքի վճարման անդորրագիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև N 1

ԴԻՄՈՒՄ-ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԻ ՎԻԶԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Լուսանկար
Photo
35x45mm

APPLICATION FOR ENTRY VISA TO THE REPUBLIC OF ARMENIA

1. Ազգանուն *(ինչպես անձնագրում)* / Surname *(As in Passport)*	8. Անձնագրի համար / Passport Number
2. Անուն *(ինչպես անձնագրում)* / Name *(As in Passport)*	9. Երբ է տրվել / Date of Issue / / *(օր/ամիս/տարի) (dd/mm/yyyy)*
3. Այլ անուններ / Other Names	10. Վավերական է մինչև / Valid Until / / *(օր/ամիս/տարի) (dd/mm/yyyy)*
4. Ծննդյան օր, ամիս, տարեթիվ / Date of Birth / / *(օր/ամիս/տարի) (dd/mm/yyyy)*	11. Անձնագրի տեսակ / Type of Passport ☐ Սովորական / Ordinary ☐ Ծառայողական (պաշտոնական, հատուկ) Service (Official, Special) ☐ Դիվանագիտական / Diplomatic ☐ Ճամփորդական փաստաթուղթ / Travel Document ……
5. Ծննդյան վայր / Place of Birth	
6. Սեռը/ Sex ☐ Արական / Male ☐ Իգական / Female	
7. Զբաղմունք / Occupation	12. Քաղաքացիություն / Nationality

13. Մշտական բնակության հասցե / Address of Permanent Residence	14. Հեռախոսահամար / Telephone

15. Հայաստանում գտնվելու ընթացքում բնակության հասցե / Address During Your Stay in Armenia

16. Դուք երբևէ դատապարտված եղե՞լ եք որևէ հանցագործության համար / Have you ever been convicted for any offense or crime? ☐ Այո / Yes ☐ Ոչ / No

17. 16 տարեկանից ցածր տարիքի երեխաներ, որոնք նշված են Ձեր անձնագրում և ճանապարհորդում են Ձեզ հետ / Children Under 16 Included in Your Passport and Travelling with You
(անուն, ազգանուն, ծննդյան օր, ամիս, տարեթիվ, քաղաքացիություն / Name, Surname, Date of Birth, Nationality)

18. Հրավիրող կազմակերպության անվանումը (կամ հրավիրող անձի անունը, ազգանունը), հասցեն և հեռախոսահամարը / Name, Address and Telephone of the Inviting Organization or Person

19. Այցելության նպատակ / Purpose of Visit

☐ Պաշտոնական / Official ☐ Գործնական / Business ☐ Անձնական / Private ☐ Զբոսաշրջություն / Tourism ☐ Այլ *(նշել)* / Other *(specify)* ……

20. Մուտքերի քանակ / Number of Entries ☐ Եզակի / Single ☐ Բազմակի / Multiple	21. Հայաստանում կեցության տևողությունը / Duration of Stay in Armenia

11_0729

22. Հայաստան մուտք գործելու օր, ամիս, տարեթիվ / Date of Entry to Armenia / / (օր/ամիս/տարի) (dd/mm/yyyy)	23. Հայաստանից ելքի օր, ամիս, տարեթիվ / Date of Departure from Armenia / / (օր/ամիս/տարի) (dd/mm/yyyy)
24. Հաստատում եմ, որ սույն դիմում-հարցաթերթիկում ներկայացված տեղեկատվությունը ճիշտ է / I certify that the information given in this application is correct Դիմողի ստորագրությունը / Applicant's Signature Ամսաթիվ / Date / / (օր/ամիս/տարի) (dd/mm/yyyy)	

Ծառայողական նշումներ / For Offic ial Use Only

1. Վիզայի համարը	2. Վիզայի տեսակը	3. Վիզայի կոդը
4. Վիզան տալու օր, ամիս, տարեթիվ _____ /_____ /_____	5. Վիզայի վավերականության ժամկետը _____ /_____ /_____-ից մինչև _____ /_____ /_____	
6. Վիզայի տրամադրման համար վճարված պետական տուրքի չափը ----------		
7. ՀՀ մուտքի վիզա տրամադրող պաշտոնատար անձի ստորագրությունը		

Ձև N 2

ԴԻՄՈՒՄ-ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԻ ՎԻԶԱՅԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՀԱՄԱՐ

APPLICATION FORM FOR EXTENSION OF ENTRY VISA TO THE REPUBLIC OF ARMENIA

Լուսանկար
Photo
35x45mm

1. Ազգանուն *(ինչպես անձնագրում)* / Surname *(As in Passport)*	8. Անձնագրի համար / Passport Number
2. Անուն *(ինչպես անձնագրում)* / Name *(As in Passport)*	9. Երբ է տրվել / Date of Issue / / *(օր/ամիս/տարի) (dd/mm/yyyy)*
3. Այլ անուններ / Other Names	10. Վավերական է մինչև / Valid Until / / *(օր/ամիս/տարի) (dd/mm/yyyy)*
4. Ծննդյան օր, ամիս, տարեթիվ / Date of Birth / / *(օր/ամիս/տարի) (dd/mm/yyyy)*	11. Անձնագրի տեսակ / Type of Passport ☐ Սովորական / Ordinary ☐ Ծառայողական (պաշտոնական, հատուկ) Service (Official, Special) ☐ Դիվանագիտական / Diplomatic ☐ Ճամփորդական փաստաթուղթ / Travel Document ……
5. Ծննդյան վայր /Place of Birth	
6. Սեռը/ Sex ☐ Արական / Male ☐ Իգական / Female	
7. Զբաղմունք / Occupation	12. Քաղաքացիություն / Nationality
13. Հայաստանում գտնվելու ընթացքում բնակության հասցե / Address During Your Stay in Armenia	14. Հեռախոսահամար / Telephone

15. 16 տարեկանից ցածր տարիքի երեխաներ, որոնք նշված են Ձեր անձնագրում և ճանապարհորդում են Ձեզ հետ /
Children Under 16 Included in Your Passport and Travelling with You
(անուն, ազգանուն, ծնունդյան օր, ամիս, տարեթիվ, քաղաքացիություն / Name, Surname, Date of Birth, Nationality)

16. Վիզայի երկարաձգման նպատակ / Purpose of Visa Extension

17. Վիզայի երկարաձգման ժամկետ / Visa Extension Term ----------	18. Հայաստանից ելքի օր, ամիս, տարեթիվ / Date of Departure from Armenia / / *(օր/ամիս/տարի) (dd/mm/yyyy)*

19. Հաստատում եմ, որ սույն դիմում-հարցաթերթիկում ներկայացված տեղեկատվությունը ճիշտ է /
I certify that the information given in this application is correct

Դիմողի ստորագրությունը / Applicant's Signature

Ամսաթիվ / Date / /
(օր/ամիս/տարի) (dd/mm/yyyy)

Ծառայողական նշումներ / For Offic ial Use Only

1. Վիզայի համարը	2. Վիզայի տեսակը	3. Վիզայի կոդը
4. Վիզայի երկարաձգման օր, ամիս, տարեթիվ _____ /_____ /_____	5. Վիզայի վավերականության ժամկետը. _____ /_____ /_____-ից մինչև _____ /_____ /_____	
6. Վիզայի երկարաձգման համար վճարված պետական տուրքի չափը ----------		
7. ՀՀ մուտքի վիզայի ժամկետը երկարաձգող պաշտոնատար անձի ստորագրությունը		

»:

11_0729